## Արձանագրություն N 4

«ՌԱԿ-ԲԸԱԾՁԲ-2016/01» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«_1_» «_Հուլիսի_» 2016թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին.

**Հանձնաժողովի նախագահ**

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա.Ռուստոմյան

**Հանձնաժողովի անդամներ**

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ.Մնացականյան

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ՝ Ն.Թովմասյան

ՀՀ ԱՆ <<Առողջապահական ԾԻԳ>> ՊՀ-ի շինարար, շրջակա միջավայրի անվտանգության մասնագետ՝ Ս.Սմբատյան

ՀՀ ԱՆ <<Առողջապահական ԾԻԳ>> ՊՀ գնումների մասնագետ՝ Ա.Հարությունյան

1. **<<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ի կողմից <<ՌԱԿ-ԲԸԱԾՁԲ-2016/01>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի հունիսի 6-ի թիվ 2 արձանագրության 4.1 կետով և հունիսի 7-ի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումները բողոքարկելու վերաբերյալ**

---

(Ա.Ռուստոմյան)

1.1 <<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ի կողմից 2016թ-ի հունիսի 13-ին Գնումների աջակցման կենտրոն բողոք է ներկայացվել ՌԱԿ-ԲԸԱԾՁԲ-2016/01 ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ-ի հունիսի 6-ի N2 արձանագրության 4.1 կետով և հունիսի 7-ի N3 արձանագրությամբ մասնակցի հայտը մերժելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ին ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումները կասեցնելու վերաբերյալ:

Գնումների բողոքարկման խորհրդի 30.06.2016թ-ի 66/16 որոշմամբ բավարարվել է <<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ի բողոքը, և դադարեցվել ՌԱԿ-ԲԸԱԾՁԲ-2016/01 ծածկագրով գնահատող հանձնաժողովի վերոնշյալ որոշումները:

Խորհրդի որոշման մեջ արձանագրել է, որ <<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ի կողմից պահպանվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այսինքն ընկերության կողմից առաջարկված պայմանագրի գնի հաշվարկում ներառվել են պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր ծախսերը, և ՌԱԿ-ԲԸԱԾՁԲ-2016/01 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից պետք է հիմք ընդունվի գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գինը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնումների բողոքարկման խորհրդի 30.06.2016թ-ի կայացրած 66/16 որոշումը համաձայն Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների, իրավապարտադիր է, ինչպես նաև կարևորելով այն, որ <<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ի հայտը չմերժելու դեպքում վերջինիս գնային առաջարկը կլինի նվազագույնը բոլոր 10 մասնակիցների գնային առաջարկների մեջ, և կտնտեսվի լրացուցիչ 780960 ՀՀ դրամ.

**2. Հանձնաժողովը որոշեց՝**

----------------------------------------------------------------------------

(Ա.Ռոստոմյան)

2.1 Հնարավորություն տալ <<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ին մեկօրյա ժամկետում շտկել հայտի անհամապատասխանությունը ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասին 5-րդ կետի և ՀՀ կառավարության 2011թ-ի 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 45-րդ կետի պահանջներին՝ ներկայացնելով հայտում ներառվող փաստաթղթերի ևս մեկ պատճե, և շտկված գնային առաջարկ, որտեղ ընդհանուր գինը հավասար կլինի Ինքնարժեք, Շահույթ և ԱԱՀ բաղադրիչների հանրագումարին:

2.2 Ծանուցել ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին, այդ թվում նաև գնահատող հանձնաժողովի հունիսի 7-ի թիվ 3 արձանագրության 5.1 կետով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ին բողոքարկման արդյունքում գնահատող հանձնաժողովի հունիսի 6-ի N2 արձանագրությամբ կայացված թիվ 4.1որոշումը և հունիսի 7-ի N3 արձանագրությամբ կայացված որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

----------------------------------------------------------------------------

(Ա.Ռոստոմյան)

3.1 <<Ջի Ար Բիլդինգ>> ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել սույն թվականի հուլիսի 4-ին, ժամը՝ 11:00-ին, <<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի պող. 49/4, 5-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

**Նախագահ**
Ա.Ռուստոմյան ____________

**Անդամներ**

Ն.Թովմասյան ____________

Հ.Մնացականյան ____________

Ս.Սմբաթյան ____________

Ա.Հարությունյան ____________